

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱՔԵՂԵԱՆԻ

«Սասունցի Գալիթ» կամ «Մհերի դուռ», Կ. Պոլիս, 1874, եւ «Գալիթ եւ Մհեր»,
Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-դիւ-
ցազնական հին վէպ:

Ա.

Հալոց ժողովրդական բանահիւսութիւնն ընդհանրապէս անդքատ է
համարուում բանաստեղծական արդիւնքներով, մանաւանդ վէպերով. և մին-
չև վերջին ժամանակներս ժողովրդական բանահիւսութեան անծանօթու-
թեան պատճառով կարծում էին իսկ, թէ մեր ժողովուրդը ի բնէ բանաս-
տեղծական չնորհք չէ ունեցել: Մովսէս Խորենացին իրանից առաջ եղած
և իւր ժամանակի հայերի համար ասում է. «Որպէս ալժմ՝ և առ հինոն
Հալաստանեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան և և րգարանաց
բանաւորաց» (ա. գիրք, գ. 41.): Բանահիւսական արդիւնքների սոյն
անսիրելութիւնը կրկնած են և շատերը, երբ որ խօսք է եղել մեր հին և
նոր ժողովրդական բանաստեղծութեան աղքատութեան մասին: Բայց այս
կարծիքը—թէ հայերը բանաստեղծութեան սէր և չնորհք չեն ունեցել—
ընդունելով հանդերձ՝ խորհրդածուները զարմանում էին միան-
դաման՝ թէ ինչպէս կարելի է, որ մի արևելեան հին ժողովուրդ, որ
ապրում է Հալաստանի նման բնութեամբ հարուստ մի աշ-
խարհում, չ'ունենար իւր որոշ աստիճանի երևակայութեան ուժը և չ'ար-
տաղէր ստեղծագործական արդիւնքներ: Զարմանքն արդարացի է. բայց
եթէ պտուելու լինինք զարմանքի պատճառները, կը տեսնենք, որ բնու-
թիւնը հէնց սկզբից ալժքան էլ չէ զլացել բանաստեղծութեան ձիրք տա-
լով հալ ժողովրդին, որ ալնպէս մեծ անտարբերութիւն չէ ունեցել դէպի
բանահիւսական ստեղծագործութիւնը, ինչպէս Խորենացին բարկացած ա-

սում է, երբ որ իւր պատմութեան համար չէ գտնում նախնի թաղաւոր-
ների թողած գրաւոր, պատրաստի լիշատակարաններ:

Ամենից առաջ պէտք է նկատել, որ մեր հին ժողովրդական բանա-
հիւտութիւնը, զրի չ'առնելով, մեղ չէ հասել. իսկ ժամանակակից բա-
նահիւտութեան նկատմամբ՝ մենք չը գիտենք թէ մեր ժողովրդի մէջ աչժմ
ո՛րքան երգեր և վէպեր կան. մենք ծանօթ չենք մեր ժողովրդա-
կան բանահիւտութեան աղքատութեան կամ հարստութեան աստիճանին:
Թէպէտև, որքան չափնի է, մեր Նովկասի ժողովրդի մէջ շատ էլ չը կան
հազերէն լեզուով երգեր և վէպեր, բայց հէքիաթներին, բալլը և ալնպէս
կարծում ենք, որ՝ եթէ մեր ժողովրդի, աւելի տաճկահալերի, բանահիւ-
տական արդիւնքները բոլորը հաւաքուելու լինին, դեռ ևս շատ գանձեր կը
գտնեն, որոնց մասին տեղեկութիւն չ'ունինք, և որոնք կարող են մի
պատուաւոր հարստութիւն տալ մեր ժողովրդական բանաստեղծութեանը:

Հեթանոսութեան ժամանակ, չը նալելով Խորենացու դանդատին,
նոյն իսկ Խորենացուց և ուրիշ մատենագիրներին արդէն չափնի է, որ
հալերս ունեցել ենք զիցարանական, զիւցաղնական և պատմական մեծ
վէպեր, որոնք ժողովրդի բերանում կենդանի են եղել մինչև և. դարը,
երբ որ, թէպէտև քրիստոնեայ վարդապետները հակառակն էին քարոզում,
ժողովուրդը դեռ ևս սիրով երգում և լսում էր հեթանոսական ժամանակի
վիպասանութիւնը և հաւատում էր նորան: Այդ վէպերը մինչև Ժ. և ԺԱ.
դարերը բոլորովին չեն մոռացել, ալ շարունակել են պատմել, եթէ
ոչ ամբողջութեամբ, գոնէ հատ ու կտորներով: Բալլը հէնց ալ ժամանակ-
ներին սկսած, շնորհիւ պատմական հանգամանքներին, հալ ժողովրդական
բանաստեղծութիւնը հետզհետէ ընկնում է, հին վէպերն ու երգերը մոռաց-
ւում են և նրանց տեղ նորերը չեն ստեղծւում, և եթէ ստեղծւում էլ են՝
ոչ առաջինների չափ և նրանց գեղեցկութեամբ, մինչև որ ժողովրդական
բանաստեղծութիւնը, ալսպէս աղքատանալով, արդի դրութեամբ հասնում
է մեղ:

Սորա պատճառները գլխաւորապէս պատմական չորս հանգամանք-
ների մէջ կարելի է տեսնել. ա) անգղալին կեանքի նեղ վիճակը, բ) օտար
լեզուների տիրապետութիւնը հալոց լեզուի վերալ, գ) քրիստոնէութեան
ազդեցութիւնը և դ) գաղթականութիւնը:

Ամենահին ժամանակներից սկսած, երբ որ մեր ազգը նոր
էր մտնում իւր բանահիւտութեան զարգացման պատմական չըր-
ջանի մէջ, երբ որ նոր ստեղծւած պատմական վէպերի հետ հին
գիւցաղնական վէպերը ժողովրդի բերանում դեռ ևս կենդանի էին մնում,
չափնի է, որ մեր ժողովուրդը շարունակ ենթակալ է եղել ալնպիսի դժ-
բաղդ հանգամանքների, որոնք թուլ չեն տուել, որ նա մի փոքր թեթև
չունէ առնէ և ազատ ընդհանր ունենալ իրական աշխարհից մի փոքր վեր՝
զաղափարական աշխարհը բարձրանալու ժողովուրդն ալնքան նեղ, ճնշած

և աղքատ վիճակի մէջ է եղել, որ առօրեայ կեանքի հոգսերից աչք չէ բաց արել և հոգևոր սփոփանքի վերայ մտածելու միջոց չէ ունեցել: Միւս կողմից՝ զիւցադնական և պատմական վէպերի համար հարկաւոր է իրական կեանքից վերցրած սխրագործական Նիւթ, հարկաւոր են ժողովրդական հերոսներ. իսկ մեր պատմական կեանքը, մանաւանդ միջին և նոր դարերում, արդեօք տւել է հերոսներ, որոնք արժանի լինէին ժողովրդի ընդհանուր սքանչացմանը, և ժողովուրդն իւր լափշտակութեան րոպէներում հիանալով պատմէր և երգէր նրանց արարքների մասին: Մեր պատմութեան մէջ միայն հեծեծանք, աւերմունք, մատնութիւն, պարտութիւն և դերութիւն ենք տեսնում. հազիւ անգամ մանր քաջագործութիւններ, մեծ մասամբ տխուր ու ցաւալի դրութիւն, որ կարելի է միայն լուռ մրմունջներով սղալ, և ոչ պանծալի զիւցադներգութեան Նիւթ չլինել: Եւ մենք իրօք տեսնում ենք, որ միջին դարերի և նոր ժամանակների ժողովրդական բանաստեղծութիւնը հարուստ է աւելի մանր ողբական երգերով:

Օտար թաթարական և թիւրքական տարրի ճնշումն և ազդեցութիւնն աչքան է եղել մեր ժողովրդի վերայ, որ նու՛ն իսկ հայերէն լեզուն, քիչ է մնացել, որ առնւի ժողովրդի բերնից, և եթէ չէ առնւել, լեզուի բանաստեղծական, պեղեցիկ կողմն առնւել է, և մնացել է աչն, որ առօրեայ Նիւթականին է վերաբերում: Ժողովուրդը, չ'ունենալով իւր սեպհական սըխրագործութիւնները երգելու համար Նիւթ, իւր չնչին խնդութիւններն ևս, սէրը, սկսել է երգել օտարին նմանելով, որովհետեւ ինքն իւր նեղւած կեանքի մէջ վտ է մնացել և եթէ երբէք աչքը բաց է արել մէկ մէկ և ուզել է լալտնել իւր սրտի զգացմունքը, տեսել է, որ իւր հետ ապրող օտարն արդէն վաղուց լալտնել է նու՛նը և աւելի գեղեցիկ կերպով. ինքն ևս աչն ժամանակ ակամայ ենթարկւել է օտարի ազդեցութեանը, ակամայ սկսել է նմանւել օտարի արտապատմութեան եղանակին: Այս ենթարկութիւնն ու նմանողութիւնն աչն աստիճանին է հասել, որ արտապատմութեան լեզուն անգամ մեր ժողովուրդն օտարից է վերցրել, որովհետեւ օտարի լեզուն իւր մայրենի լեզուի չափ ծանօթ է եղել իրան. և աչս նորա համար, որ իւր լեզուն բանաստեղծութեան համար շատ վտ է մնացել, աչն ինչ օտարինը զարգացած է եղել և ունեցել է բազմաթիւ պատրաստի ձևեր: Ո՞վ կարող է ասել, որ մեզանում եղած աչն բազմաթիւ երգերն ու վէպերը, որոնք ընդհանուր են հային և թուրքին, մեծ մասամբ հալ մարդու մտքից չեն ստեղծւել, միայն օտար եղանակով և լեզուով: Միթէ մեր աչքի առաջ նոյնը չէ կատարւում, որ հայը թուրքերէն է իւր զգացմունքներն երգում, որ ամբողջ հալ գիւղը հաւաքւում է ականջ դնելու հալ աշուղի թուրքերէն լեզուով պատմած վէպին: Ինձ պատահել է հարցնել մի հալ աշուղի թէ ինչո՞ւ նա՝ հալ մարդ է՝ և իւր երգերը հայերէն չէ ասում.— Որովհետեւ, պատասխանեց նա, — հայերէն լաւ չի դուրս գալիս, իսկ թուրքերէն թէ լաւ է լինում և թէ հեշտ եմ

հանում:—Ահա ժողովրդական բանաստեղծութեան աղքատութեան ակըն-
կալտնի պատճառը, այն՝ որ ժողովրդական լեզուն փոխ է մնացել իւր զար-
գացման մէջ:

Հայոց լեզուն տիրապետող է եղել միայն ընտանիքի մէջ, բայց ըն-
տանիքի մէջ էլ կնոջ բերնով չեն արտասանում բանաստեղծական մեծ
երգեր և վէպեր. կիներ այլ մարդուն հաւասար չէ եղել բանաստեղծական
և առհասարակ մտաւոր արդիւնքների մէջ. դորա համար և մենք ունինք
կանանց ջորինած միայն փոքր և թեթիւ երգեր, ջան-գիւլումներ և ալլն,
որոնք հայերէն լեզուով են:

Բայց եթէ նոր բանահիւսական ստեղծագործութիւններ չէ արել մեր
ժողովուրդը, զոնէ հին վէպերը պիտի պահէր բերնէ բերան աւանդելով:
Դորա համար պէտք է ասել, որ հին վէպերի (հեթանոսութեան ժամանակի)
ժամանակը և մեր ժամանակը երկար միջոցով է բաժանւած. որքան և
ժողովրդի լիշողութիւնը զօրեղ լինէր, նրանք դարերի ընթացքում դար-
ձեալ մոռացութեան պիտի տրւէին, չը նորոգուելով ժամանակակից տար-
րերով, մանաւանդ որ մեր պատմութիւնից չալտնի է՝ թէ կրօնաւորական
դասը ինչպէս թշնամաբար է վերաբերել հեթանոսական ժամանակից ե-
կած ժողովրդական, բանահիւսութեան արդիւնքների նկատմամբ: Կրօնա-
ւորներն ամենայն ջանքով աշխատել են մոռացութեան տալ ժողովրդին
հեթանոսական լիշատակները, դժբաղդաբար առանց գրի առնելու. և այդ
մեծ մասամբ չաջողել է նրանց, մանաւանդ որ մեր ժողովուրդը Ն. դարից
սկսած հաստատ կապերով ամրացած է եղել եկեղեցու հետ: Սա-
կալն եկեղեցու այդ ազդեցութիւնը բոլորովին ոչնչացնող դեր
չէր կարող կատարել. նորա ազդեցութեան տակ հին վէպերը մասամբ
կարող էին քրիստոնէական ձև ստանալ և դարձեալ կենդանի մնալ, եթէ
չը լինէր մի ուրիշ հանգամանք—գաղթականութիւնը:

Որպէս զի մի հին պատմական երգ կամ վէպ կենդանի մնալ, հար-
կաւոր է, որ նոյն իսկ ժողովուրդը մնալ իւր տեղում, իւր հողի վերայ:
Վէպի անցքը, իրողութիւնը, սերտ կերպով կապւած է իւր աշխարհագրա-
կան տեղի հետ: Մեր ժողովուրդը մի փոքր գաւառում անգամ, չենք կա-
րող ասել, որ ամեն մի դարում չէ տեղափոխւել տեղից տեղ, թէ Հալաս-
տանի մէջ մի գաւառից միւսը և թէ հայրենիքից դուրս դէպի օտար եր-
կիրներ և դարձեալ նորից դէպի իւր հայրենիքը: Մենք չենք կարող մի
գաւառ, քաղաք կամ գիւղ անգամ ցոյց տալ, որի բնակիչները վկա-
լին իրանց երեքհարիւր տարւալ հնութեան մասին: Մենք շատ ունենք
քաղաքներ և գիւղեր, որոնց անունները հին են, բայց բնակիչները միշտ
փոխւել են, հները գնացել են, և նորերը եկել: Քանի քանի գիւղեր կան,
որոնք իրանց կողքի մի աւերակ չը գիտեն թէ ինչ է, թէպէտ և աճառելի
բնակիչները բաւականի հնութիւն են վկայում. բայց նրանք ինչքան և հին
լինէին, նրանց նախնիքները նոյն գիւղում եկել բնակւել են, երբ որ աւե-

րական արդէն աւերակ է եղել, ապա թէ ոչ, անկարելի էր, որ ժողովրդի մէջ կենդանի չը մնար աւերակի փշատակը: Ինչո՞ւ ժողովրդի մէջ, իւր կրած լեղափոխութիւններից լեռու անգամ, դեռ կենդանի են հեթանոսական հաւատալիքները, իսկ աւերակի փշոտութիւնը պիտի մեռնէր:—Միայն նորա համար, որ հեթանոսական փշատակը տեղի հետ կապւած չէ, ժողովուրդն ուր գնում է, իւր հետ տանում է, իսկ աւերակն ալնալիս փշոտութիւն է պահանջում, որ կապւած է աշխարհադրական տեղի հետ:

Այսպէս և դիւցազնական, պատմական վէպը կապւած է իւր տեղի հետ. տեղից բաժանւեցաւ թէ չէ, չի անցնիլ երկար ժամանակ, որ վէպը կամաց կամաց մոռացութեան կը տրւի և կամ կը դառնայ ալն բազմաթիւ դիւցազնական հէքիաթներից մէկը, որոնք չըջում են մեր ժողովրդի մէջ, և որոնք սկզբնական ձևով անշուշտ մի մի դիւցազներգութիւններ են եղած:

Եթէ մեր երկրում կա՞ մի գաւառ, որ սակաւ գաղթականութիւն է ունեցել, գոնէ պատմութեան մէջ չէ լիչւում, ալ չ'Տօրոսեան լեռների ճիւղերն են, իրանց անմատչելի դիրքով,—Սասուն, Շատախ, Մոկաց երկիր: Եթէ Հալաստանում կա՞ մի տեղ, ուր աւերմունքն ալնքան մուտք չէ գործել, և ուր ազգային անկախութեան կտորի՞ ողին կենդանի է մնացել քիչ ու շատ,—մեր պատմութեան մէջ լիչւում են Սասունը և Տօրոսի լեռները՝ Վանա՞ լճի հարաւային կողմերում, ուր հալին դրացի է միայն քուրդը, որ չէր կարող հալի վերալ ալն բարոյական ազդեցութիւնն ունենալ, ինչ որ թուրքը: Եւ ահա մինք զարմանքով տեսնում ենք, որ ազգային ժողովրդական բանաստեղծութեան կենդրոնն են հանդիսանում ալն կողմերը, որոնց հալ բնակիչների մէջ պտտում են թէ նոր չօրինւած և թէ հնուց աւանդւած շատ երգեր և վէպեր: Սասունցիք ունեցել են իրանց վէպերի համար նիւթ, որովհետև նրանք հերոսական կուիւներ են տւել թաթարների և թուրքերի դէմ: Սասունցիք և Մոկացիք պահել են իրանց բանաստեղծական լեզուն, որովհետև թուրքի ազդեցութեանը շատ չեն ենթարկւել: Նրանք պահել են իրանց հին վէպերը, որովհետև իրանց հալրենիքում են մնացել և, շնորհիւ իրանց երկրի ամուր դրութեան, աւանձնացած կեանք են վարել և պահպանել են ազգային աւանձնութիւնները:

Բ.

Հնութիւնից եկած մի դիւցազնական ընդարձակ վէպի մնացորդ է և Հալաստանի ալն մասում բնակւող ժողովրդի բերանում եղած Աբամելիքի, Դաւթի և Մհերի վէպը: Ալն վէպի սկիզբը շատ հին պէտք է եղած լինի, մինչև անգամ քրիստոնէութիւնից շատ առաջ. և պէտք է նա բաւականի ընդարձակութիւն ունեցած լինի, քանի որ նորա արդի դրութիւնն իսկ աւելի մեծ ընդարձակութիւն է ցոյց տալիս, ալն է, ինչպէս ասում

են, ալդ վէպը բաղկացած է քառասուն ճիւղից և պատմում է Աբամելիքից ու Սանասարից սկսած որդէյ որդի պապազատող իշխան զիւցազունների պատմութիւնը մինչև անժառանգ Մհերը, որով վերջանում է զիւցազուններութիւնը։ Ափսոս որ վէպի բոլոր ճիւղերը, որոնց թիւը ժողովուրդն իւր սիրած քառասունին է հասցնում, իրանց վարիտներով չեն հաւաքւած. մենք ունինք միայն վէպի սկիզբը՝ Աբամելիք և Սանասար (հ. Սըրուանձտ. վարիանտում), աչոտհետև Մեկքիսէթ քահանայի և Բաղդասարի անունները միայն, որ, մեր վարիանտի պատմող Մովսէս ասելով, առանձին ճիւղեր են, Թուան Դաւթից մի փոքրիկ հատւած և Թլօր Դաւթի և Մհերի պատմութիւնը. ընդամենը վեց ճիւղ, որոնցից երկուսի միայն անունները, իսկ վէպի սկիզբն և վերջը բաւականի ընդարձակ։ Թէպէտ և ալդպէս աղքատիկ հաւաքածու է, բայց ալդ աղքատութեան մէջ ևս երկուսն է վէպի հնութիւնն և ընդարձակութիւնը։ Վէպի նիւթը հետևեալն է.

Բաղդադու հզօր խալիֆան արշաւանքներ է անում Հայաստանի վերայ, նա մի արշաւանքի ժամհակ գերի տարած մի հալ աղջկալ հետ ամուսնանում է և նորանից ունենում է երկու որդի՝ Աբամելիք և Սանասար։ Խալիֆան ուզում է իւր որդիներին զոհ մատուցանել իւր մեծ կուռքին. նրանք իրանց մօրից իմանում են ալդ և փախչում են Հայաստան. դիմում են Աղդուսի և Կարսի ամիրաներին, որ իրանց ընդունեն, բայց նրանք Բաղդադու խալիֆայից փախենալով չեն ընդունում. վերջը դիմում են Կապուտկողի թագաւորին, որը նրանց՝ ընդունում է իւր ծառայութեան մէջ։ Առ ժամանակ անցնելուց չեսու, թագաւորը երկու եղբայրներին տալիս է քառասուն տուն ժողովուրդ և թուլ է տալիս, որ նրանք զնան կանգնեն իրանց բերդը, որի հիմքը՝ զրեւ էին իրանց փախստից չեսու, զեռ ամիրաներին չը դիմած, և աչտեղ բնակեն։

Բերդը կանգնում են. թագաւորն իւր աղջկան տալիս է Աբամելիքին և քեռի թորոսի հետ զալիս է երկու եղբայրների բերդը, որի անունը դնում է Սանտուն—Սասուն։ Երկու եղբայրները հետզհետէ տիրում են Սասունի շրջակայ երկիրներին։ Աբամելիքը սպանում է Մարալ թագաւորին և ամուսնանում է նորա կնոջ վերայ, որից, զեռ Մարալ թագաւորին չը սպանած, ապօրինաբար ունեցած է լինում Մարամելք որդին։ Մարամելքը մեծանում, նստում է Մարում, իսկ Աբամելիքը՝ Սասունում։ Սանասարը, քանի զեռ Աբամելիքը Մարում էր նստում, վերադառնում է Բաղդադ, և սպանում է կռատան մէջ իւր հօրը, երբ որ սա իւր մեծ կռքին երկրպագութիւն էր տալիս, և ինքը նստում է Բաղդադում։ Աբամելիքը Կապուտկողի թագաւորի աղջկանից ունենում է մի քանի որդի, (Յաան Վէգի (Վէրգո), Ձէնով Յովան, Ճնճղափոքրիկ, Խորգուսան), որոնց մէջ ամենից փոքրն ու զօրեղը Դաւիթն է։

Աղբալին վէպի առաջին ճիւղի բովանդակութիւնն այս է. աչոտհետև

դալիս է միւս ճիւղը՝ Դաւիթը, որից երկու վարիանտ ունինք. մենք կը բերենք երկու վարիանտից միացրած համառօտ բովանդակութիւնը:

Դաւիթը երկրորդ վարիանտում Աբամելիքի որդին չէ, այլ նորա սերունդից է. Ձէնով Յովանը և Յուան Վէրդօն նորա հօրեղբայրներն են. իսկ Մարալ քաղաքի իշխող Մարամելիքը Սասունին թշնամի մի տիրապետ է: Դաւթի հայրը մեռնում է. մայրը գնում է Մարամելքին, Մարալ քաղաքի իշխողին: Ձէնով Յովանը Դաւթին տանում է իւր մօտ: Դաւիթը, դեռ երեխայ, գուրգ խաղալու ժամանակ Մարամելիքի ձգած գուրգը բռնում է և նորան ամօթով թողնում: Մարամելիքը Դաւթի վերադ կասկածում է, և մայրը նորան լետ է ուղարկում Սասուն, Ձէնով Յովանի մօտ¹⁾:

Ձէնով Յովանը Դաւթին դառնարած է կարգում. նա գալլ, աղւէս, նապաստակ հաւաքում, խառնում է գառներին, բերում քաղաք: Յետոյ նա հորթարած է դառնում (հ. Սրուանձաւ. վարիանտ) և ընկերութիւն է առնում ռամկի հորթարածի հետ: Մէկ օր նա գնում է ռամկի ցասման ժամի հարիսալի կաթնաճան ամբողջ վերցնում, բերում է իւր եղբայր հորթարածի համար, որ չէր կերել հարիսալից. նորա բացակայութեան ժամանակ քառասուն հարամի դեեր դալիս, հորթերը չափշտակում, տանում են. Դաւիթը հորթերի հետքով գնում է դեերի ալը. բոլորին կոպալով կոտորում է. միւս օրը քեռի Թորոսի հետ նրանց կողոպտւած վերցրած բոլոր կարողութիւնն ալից հանում է: Դաւթին նախորդ են դարձնում. նա մեծ մեծ գաղաններին է հաւաքում, բերում քաղաք. քաղաքացիները վախենում են և նրանց խնդիրքով Ձէնով Յովանը Դաւթին նախորդութիւնից հանում է, և տանը հիւրընկալ է կարգում: Դաւիթը չէ կատարում Ձէնով Յովանի կնոջ՝ Սառի կամքը և սորա զրպարտութեամբ Ձէնով Յովանը նորան տնից դուրս է անում: Նա ապրում է մի պառաւի մօտ, որ իւր հօր սիրականն է եղած, և որսորդութեամբ է պարապում:

Այդ ժամանակ Մարամելքն ուղարկում է Կողբաղնին (Խօլբաշի), որ ազատ Սասունից հարկ առնէ: Դաւիթը, պառաւի խորհրդով, Կողբաղնի ժարդկանց կոտորում է և Կողբաղնին խալտառակաբար ճանապարհ է դնում դէպի Մարամելքը: Մարամելքը զօրաժողով է լինում, և դալիս է Սասնու վերադ: Դաւիթը Ձէնով Յովանից զօրով ստանում է իւր հօր «Մարութալ բանձրիկ Աստուարածին, խաչ-պատարաղին, ինչ վար աջ թեին, Քուռկիկ-Ջալալին, թուր կէծակին, գլխու գեօտին, կապէն խաբուկին,

1) Հ. Սրուանձաւեանի վարիանտով Մարամելքը Աբամելիքի յանձնարարութեամբ է, Աբամելիքի մահից յետոյ, Դաւթին և նորա եղբայրներին, իւրեւ մեծ եղբայր, տանում իւր մօտ պաշտելու. բայց քեռի Թորոսը, իբրև աւելի մեծ իրաւունքի տէր, գնում է, նրանց բերում է Սասուն: Այնտեղ ևս Մարամելքը կասկածում և վախենում է Դաւթից, որ իւր դիւցազնութիւնը ցոյց է տալիս Մարամելքի Թրի տակով չ'անցնելովը և իւր ոյժովը:

քամարն ի մէջքին», և մենակ դուրս է գալիս Մարամելիքի դէմ կռւի: Ճանապարհին լողանում է իւր հօր կաթնաղբիւրում և կատարեալ դիւցազնի փոխում, ապա իւր ուժը ճանապարհին տնկած երկաթէ սեան վերայ փորձելուց լսող, սարի վերալից Մարամելիքի բանակին երգով իմաց անելով, լարձակում է գործում և կոտորածն սկսում: Զօրքի միջից մի աւլոր խորհուրդ է տալիս Մարամելիքի հետ մենամարտել և իրանց չը կոտորել, որովհետեւ Մարամելիքն իրանց դօրով է կռիւ բերել: Դաւիթը գնում է Մարամելիքի կանաչ վրանը: Մարամելիքին գօրով քնից հանում են. նա Դաւիթին հիւրասիրում է (հ. Սր. վար.), բայց վերջը ձգում է առաջուց պատրաստած թակարդի մէջ:

Զէնով Յովանը երազի մէջ իմանում է Դաւիթի նեղ դրութիւնը և Սև ձին նստելով մի ակնթարթում ելնում է սարի գլուխը, որտեղից բարձր ձալնով Դաւիթին հասկացնում է խաչ-պատարազինի դերբնական գօրութիւնը: Դաւիթը հորից դուրս է գալիս և Մարամելիքի հետ մենամարտելով, նորան սպանում է և տիրելով Մարալ քաղաքին, նստում է ակնտեղ:

Զէնով Յովանը Դաւիթի համար նշան է դնում Զմէկիկ Սուլթանին. բայց ադր ժամանակ Կաղզուանու տիրոջ աղջիկ Խանդուլթ խաթունը, որ աւելի գեղեցիկ էր, երկու գուսան է ուղարկում, որ իւր գովքն անեն Դաւիթի մօտ և Դաւիթը դաչ իրան ուղի: Գուսանները գալիս են Սասուն և Խանդուլթ խաթունին գովում: Գուսաններին ծնծում են և Սասունից դուրս քշում. նրանք հօտաղներից իմանում են, որ Դաւիթը Մարում է, գնում են Մարալ քաղաքը: Դաւիթը, լսելով Խանդուլթ խաթունի գովքը, գալիս է Սասուն և իւր հօրեղբօրը լստնում է, որ Խանդուլթ խաթունին պիտի ուղէ: Նա ճանապարհ է ընկնում դէպի Կաղզուան. ճանապարհին երկու անգամ լծում է գութանին և գոմէշների փոխանակ ինքը քաշում է գութանը: Սրբ որ Դաւիթը հասնում է Կաղզուան և Խանդուլթ խաթունը պատուհանից նշան է տալիս Դաւիթին, միւս հարսնախօս փանլուանները նախանձում են Դաւիթի վերայ և խնջուքի ժամանակ ուզում են նորան սպանել, բայց չի լաջողում: Դաւիթը նրանց սպանում է: Նա գփտում է Խանդուլթ խաթունի հետ և ուզում է իւր քաջութիւնը ցույց տալ Խանդուլթ խաթունին. թշնամիները, Հալաբայ թագաւորի առաջնորդութեամբ, պաշարում են Կաղզուանը. Դաւիթը չաղթում է նրանց: Թշնամիները խաբէութեամբ Սասունից բերել են տալիս Յօան Վէրգօյի որդի Պարոն-Աստղկին, որ Դաւիթի հետ կռւի. Դաւիթն ակամայ սպանում է Պարոն-Աստղկին:

Խանդուլթ խաթունն և Դաւիթն ամուսնանում են և ճանապարհ են ընկնում դէպի Սասուն: Զմէկիկ Սուլթանը գալիս է Դաւիթի առաջ և ուզում է իւր անպատուութեան վրէժը կռուով առնել Դաւիթից: Դաւիթը նորանից ութ օր միջոց է ուզում, որ իւր կնոջը տանի Սասուն և նոր գալ,

կոխ ածի, և երդում է խաչ-պատարադինի վերայ. բայց Նա Սասունում ութ տարի շարունակ մոռանում է իւր տւած երդումը:

Ծնւում է Դաւթի որդի Մհերը, որի մի ձեռքը խփւած է. միայն հալըը կարողանում է բանալ որդու խփւած ձեռքը, որի մէջ մի կաթ աբիւն է լինում: Մհերը դիւցազնաբար արագ մեծանում է և երկխաղութեան փամանակ իսկ պատիւ է դառնում Սասունցիների զլխին: Նա հօրը չէ ականջ դնում. և երբ հալըը նորան մի ապտակ է խփում իւր շինած կամըրջով Սասունցիներին նեղելու համար, նա, ութ տարեկան հասակում, հօր հետ կոխ է մտնում: Հալըը նորան անիծում է, որ զաւակ և մահ չ'ունենալ, և տեսնելով, որ խաչ-պատարադինն իւր թևի վերայ սեացել է, վիշում է Չմչիկի Սուլթանին տւած երդումը և գնում է նորա մօտ: Չմչիկի Սուլթանը նորան սպանում է, և տեղից ծածուկ խփելով կրակացրած գութանի խոփով, երբ որ նա աւաղանում լողանալուց լետող դուրս եկել, շորերն էր հագնում: Խանդուկ խաթունը թոյն է խմում և մեռնում ¹⁾:

Մհերին Չմնով Յուլանը դուրս է անում Սասունից. նա իւր հօրն ու մօր գերեզմանների վերայ լաց է լինում և նրանց ուրախանների խորհրդով ճանապարհ է ընկնում դէպի Հալաբայ քաղաքը: Ճանապարհին պատահում է Գոհար խաթունի մօրը, որ խոստանում է իւր աղջիկը տալ Մհերին: Մհերն և Գոհար խաթունը կոտորում են Հալաբայ թաղաւորի բանակը, որ եկել էր Գոհար խաթունին թագաւորին կնութեան տանելու: Գոհար խաթունի մահից լետող Մհերը շարունակում է փաշլուանութիւն անել. բայց վերջն ինքն ևս ձանձրանում է իւր կեանքից, որովհետև իւր չափազանց ուժից ոտները խրում էին գետնի մէջ և որսորդներն ու ուրիշ փաշլուանները նորան նեղում էին: Նա Խլաթայ աչրի տակ երկար տարիներ աղօթք է անում Աստուծուն և Աստուած նորան մարմնաւոր կերպով ձգում է վանալ ալըր, ուր գտնւում է մինչև այժմ կենդանի:

Գ.

Մ. Խորենացին իւր պատմութեան ա. գրքի բ. գլխում պնդատակում է. «Իւրաքանչիւր տանց առանձնականութեանց... դտանին ամբաւ դրուցաց մատենանք, մանաւանդ որ ի սեփական իշխանութեան սլաւապատու-

¹⁾ Հ. Սրուանձոեանի վարիանտով՝ խլաթցիներն են Դաւթի առաջ դուրս գալիս, երբ Դաւթը Խանդուկ խաթունի հետ Սասուն էր գալիս: Դաւթը խլաթցիներին երդւում է, բայց սխալելով, փոխանակ սանրի վերայ երդւելու, ու նշանի վերայ է երդւում: Խլաթցիները նեղն են լծում Դաւթին. և երբ Դաւթը, նրանց ձեռքից փախած, լողանում էր Լօխօբայ ջրում, Աբամեղիքի ցեղից (այսօրեանաբար սեւրած) մի աղջիկ թաքկացած տեղից նետով խփում, սպանում է նորան: Մհերն, իւր հօր մահւան վրէժն առնելու համար, աւերում է Խլաթը:

թիւն»։ Խորենացու ալս խօսքերից երևում է, որ Ն. դարում զրեթէ մեր բոլոր նախարարական տներն ունեցել են իրանց առանձին պատմութեան գրատու մատեաններ, որոնց մէջ գրւած են եղել իշխանական տների մասին զրուցներ, նրանց իրար հետ ունեցած կռիւներն ու դաշինքները և ինչ որ վերաբերում է նախարարական տների պալատատնութեան (պալոր-դութեան)։ Մեր նախարարական տների շատերի ծագումն աղբաւն հին է եղել, երբոր Հալատտանում զրի գործածութիւն ամենեւին չէ եղել. եթէ Ն. դարում գրւած են եղել նրանց մասին զրուցներ, ապա զրուցների հին մասն անշուշտ պիտի վերցւած լինէին ժողովրդի և իրանց՝ ազնական տների մէջ եղած բերանացի առանդութիւններից։ Թէ իշխանական տների մասին բերանացի վէպեր եղել են մեղանում, ապա արդէն չալտնի է, բայց ապա վէպերից Խորենացին իւր պատմութեան մէջ հատուածներ է բերում միայն ալս վէպերից, որոնք վերաբերում են թալաւորող հարստութեանը կամ Արարատեան մեծ իշխանական տանը. իսկ մասնաւոր նախարարական տների համար նա բաւականանում է վիշելով միայն համառօտ խօսքերով նրանց ծագումը, առանց չալտնելու, սակաւն, թէ ո՛րտեղից է վերցնում, թէպէտև տեղ տեղ նա ակամպէ, կարծես, ստիպւում է ցոյց տալ, որ նախարարութիւնների ծագումը և նրանց պատմութիւնն ևս վերցնում է բանաւոր առանդութիւններից։

Ազգային մի առանդութեան կտոր նա բերում է Արծրունեաց մասին. «Թողում դառասպելիացն բաջադանս, որ ի Հաղամակերոյն պատմին. մանկան Նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի թռչնոյ պատանուն թալկացելոյ» (բ. գր. է. գլ.)։ Նոյն Արծրունեաց և Աղձնեաց բղեշխութեան ծագման մասին Խորենացին, իբրև թէ Մարաբասից քաղելով, ասում է. «Զոր (զԱնեքերիմ արքայ Ասորեստանեաց) սպանեալ որդւոց նորա Աղրամելայ և Սանասարայ, եկին փախստական առ մեզ. չորոց զմինն յարեմաից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկալորդին մեր քաջ նախնին, ալսինքն զՍանասար. և ի սմանէ սերեալ լցին զՍիմն կոչեցեալ լեառն։ Իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ չեաոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թալաւորսն մեր ցուցեալ, բղեշխութիւն կողմանցն (Աղձնեաց բղեշխութիւն) արժանացան առնուլ, իսկ Արգամոդանն (Աղրամել) յարեալից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ, ասէ պատմագիրն (Մարաբաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս» (Խոր. ա. գր. իգ. գլ.)։ Մի ուրիշ տեղում ասում է. «ԶՄարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ բղեշխ մեծ և կուսակալ յարեմաից հարաւոյ, չեղեր սահմանացն Ասորեստանի, առ ալսն Տիգրիս գետոյ, զաւառս պարգեւելով զԱրձն, որ շուրջ զնովաւ, և զլեառն Տաւրոս, ուր և Սիմ, և զՎղեսուրն ամենայն» (բ. գր. Ը. գլ.)։

Աղրամելի և Սանասարի Հալատտան դալու մասին լրջատակած է և Աստուածաշնչի մէջ. «Մինչդեռ երկիրպագանէր (Անեքերիմ արքայ) ի

տան ներսաքալ աստուծոյ իւրում, Աղբամեղէք և Սարասար որդիք Նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան լերկիրն Արարատայ» (Չորր. թագ. ԺԹ. գլ. 37): Ս. Գրքի և Խորենացու պատմութիւնը գրեթէ նոյնանում են անուններով. Սարասար միևնոյն Սանասարն է, իսկ Աղբամեղէքը—Աղբամել, որ Խորենացին մի քիչ ներքեւում Արգամոզան է անուանում, որ կամ Աղբամելի աղաւաղումն է, կամ ուրիշ կոչումը:

Այսպէս Խորենացուց մենք ունենք Աղծնեաց բղեշխութեան և Արծրունեաց ծագման պատմութիւնը. Աղծնեաց բղեշխները Սանասարի, իսկ Արծրունիք Աղբամելի սերունդներն են և բնակւել են Սիմ սարում և Նորա հարաւային արեւելեան կողմերում:

Աղծնեաց բղեշխների աշխարհը մեր պատմութեան մէջ չպատնի է Աղծնիքը, որի հիւսիսային կողմը կտրուած է Տօրոսեան լեռներով, որոնց մէջ է գտնւում Սասունը, Սիմի հարաւային կողմում. իսկ Արծրունեաց երկիրն աւելի արեւելք է ընկնում, Վասպուրական աշխարհում: Բայց, ինչպէս երևում է, Արծրունիք էլ սկզբում աւելի արեւմուտք, Աղծնեաց սահմաններում էին բնակւում, ինչպէս գրում է Խորենացին՝ «պարեկից հարաւոյ Նորին կողմանն», ալսինքն՝ Սիմ լեռան: Թոմա Արծրունին գրում է. «Վասն բնակութեան նախնեաց նոցա (Արծրունեաց) Աղբամելայ և Սանասարայ Արզն (յԱրզն) կոչեցին Արծրունիք» (Վ. Պ. տալ. եր. 46): Այս ցուցմունքներից երևում է, որ, ինչպէս Աղծնեաց բղեշխների, նոյնպէս և Արծրունեաց բնագաւառն եղել է Արզն, Արծն գաւառը, որ Աղծնիքում է, Սասնու հարաւային կողմերում:

Այսպէս պատմութիւնից տեսնում ենք, որ Աղբամեղէքի և Սանասարի սերունդները տիրել են Տօրոսեան լեռների ձիւղերում, Աղծնեաց, Մոկաց, Վասպուրականի և Տուրուբերանի սահմաններում, և հին ժամանակներից կազմել են Հայաստանի հզօր նախարարութիւններից երկուսը, արեւմուտքում Աղծնեաց բղեշխութիւնը, իսկ արեւելքում՝ Արծրունիք: Այս նախարարութիւնները մեր պատմութեան մէջ մեծ դեր են խաղացել, սկզբում Աղծնեացը, լատի Արծրունեացը, և քանի որ մեր նախարարութիւններից շատերի մասին կային զրուցներ, սպասելի էր, որ ալք ցեղակից նախարարութիւնների մասին ևս լինէին ժողովրդի մէջ զրուցներ: Արծրունեաց մասին եղած մի զրուցի բովանդակութիւնը, որ վերը բերեցինք, լիչում է Խորենացին. բայց Աղծնեաց մասին հին զրուցների փշատակութիւն չը կա. միայն ԺԱ. դարու պատմիչ Արիստակէս Լաստիվերտցու մէջ գտնում ենք մի կտոր. «Իջին զօրքն ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւն Սանասունք ասեն ըստ անուան նախնուց իւրեանց» (Լաստ. իա. գլ.). որից երևում է, որ ԺԱ. դարում Սասնու կամ Սիմ լեռան ժողովուրդը զեռ. ևս ունեցել է կենդանի զրուցներ իւր նախնիքների մասին, և մինչև անգամ լիշխիս են եղել, որ Սանասունք, ալթմեան Սասուն, անունը դուրս է գալիս իրանց նախնուց, հաւանականօրէն Սանասարից, որ, ըստ Խորենացու, Աղծնեաց բղեշխների նախահայրն է:

Այդ աւանդութիւններն անշուշտ հնութիւնից, Սասունցոց նախնու ժամանակից, եկած, հասած պէտք է լինէին մինչև լատիվերացու ժամանակները. և որովհետև Տօրոսեան լեռներում բնակող հայ ժողովուրդը, ինչպէս վերևում նկատել ենք, պակաս տեղափոխութիւններ են կրել և աւելի են պահել իրանց նախնական առանձնութիւնները, ուստի և մենք պիտի սպասէինք, որ մինչև մեր օրերն իսկ պահած լինէին անտեղ գէթ սոսկ աւանդութիւններ իրանց նախնիքների մասին, որ են Աղձնեաց բղեշխները և ճրանց ցեղակից ու սկզբում մօտիկ ապրող Արծրունիները։ Եւ մենք ալժամ դատում ենք ոչ լոկ աւանդութիւններ, այլ ամբողջ ժողովրդական վէպ, որ, չընալելով դարերի ընթացքում կրած փոփոխութիւններին, ակնբաշտնի երևում է, որ նոր վէպ չէ և վերաբերում է վերովիշեալ երկու իշխանական տների ծագմանը և նրանց սերնդին։

Դ.

Այս ենթադրութիւնը՝ թէ ալժամեան Աբամելիքի և Սանասարի, Դաւթի և Մհերի վէպը Արծրունեաց և աւելի Աղձնեաց բղեշխների ծագման և սերնդի մասին է ¹⁾, աւելի բացալատ է վէպի առաջին ճիւղից՝ Աբամելիքի և Սանասարի պատմութեան մէջ։ Վէպի Սանասարը մինեոյն Խորենացու Սանասարն է կամ Աստուածաշնչի Սարասարը. իսկ Աբամելիքը Աստուածաշնչի Ագրամելէքը կամ Խորենացու Ագրամելը (Արգամողան)։ Հերոսների անունների նոյնութիւնից զատ, վէպի ամբողջ ընթացքն իւր աշխարհագրական տեղերի հետ միասին նշանակում է Աստուածաշնչի և Խորենացու պատմութեանն և տեղերին։

Բաղդադու խալիֆան ներկայանում է փոխանակ Ասորեստանի (Նինուէի, որից հարաւ ընկնում է Բաղդադը) Սենքերիմ թագաւորին, որ կռապաշտ է, ինչպէս և վէպի մէջ Բաղդադու խալիֆան։ Ժողովուրդը Նինուէի թագաւորին անուանում է Բաղդադու խալիֆալ, որովհետև Նինուէն և իւր թագաւորութիւնը, խորին հնութիւն ունենալով, ժողովրդի վիշդութիւնից դուրս են եկել և նրանց փոխանակել է աւելի նոր ժամանակների Բաղդադու մահմեդական խալիֆալութիւնը. բայց միանգամայն ժողովուրդը վէպի մէջ չէ մոռացել, որ ալժ կողմերում նստող (Նինուէի) թագաւորը կռապաշտ է եղել, ան ինչ Բաղդադու խալիֆաները կռապաշտ չեն եղել։ Այսպէս տեղն և անունը ժամանակի ընթացքում փոփոխութիւն են կրել— թէպէտ և տեղը Նինուէից շատ էլ չէ հեռացել—բայց կռապաշտական կեանքը նոյն հինն է մնացել, թէպէտ և ոչ հայերի համար, որովհետև ժողովուրդը չէ հաւատում, թէ երբ և իցէ հալքրիստոնեաները կարող էին կռապաշտ լինել։ Վէպի մէջ փշուում է և Բաղդադու խալիֆաների արշաւանք-

¹⁾ Տե՛ս պ. Ս. Մանդենեանի «Աղբային Դիւցազնական Աշխարհի» յաւելածը։

ները դէպի Հայաստան. իսկ պատմութիւնից չափնի է, որ Ասորեստանի թագաւորները շատ անգամ արշաւել են Հայաստանի վերայ և մինչև անգամ նրանցից մէկի, Թակլատ-Պալասարի արձանը գտնել է արևմտեան Տիգրիսի վերին հովիտներում, Տօրոսեան լեռների մէջ: Հալոց չարաբերութիւնը Ասորեստանցոց հետ թէ խորհնացուց և թէ սեպագրութիւններից չափնի է:

Վէպի մէջ Սանասարն և Արամելիքը իրանց հօր ձեռքից փախուտական զալիս են Հայաստան. նրանք դիմում են Արդրումի, Կարաի ամիրաներին, որոնք չեն ընդունում նրանց, վախճնալով Բաղդադու խալիֆայից. նրանք զալիս են վերջապէս Կապուտկողի թագաւորի մօտ, որ նրանց ընդունում է: Հետաքրքիր է այստեղ այն կէտը, որ վէպի մէջ Հայաստանում ալը հին ժամանակներում դուրս է գալիս մի թագաւոր՝ Կապուտկողի թագաւորը, և միւս քաղաքներում՝ Կարսում և Արդրումում նստող հասարակ ամիրաներ, որոնք միեմուն հին ճախարար-իշխաններն են, միայն ժողովրդի իշխողութեան մէջ միջին դարերի պատմական կիանքի ազդեցութեան տակ ամիրայի փոխւած: Սույն իշխանական գրութիւնը եղել է Հայաստանում և ալը հին, սեպագրական ժամանակներում, — մի մեծ իշխան և երկրորդական բազմաթիւ իշխաններ, որոնք աւելի թույլ են եղել և ենթարկւած մեծ իշխանին: Ասորեստանցոց հետ ունեցած չարաբերութեան մէջ զլխաւոր առաջնորդը եղել է մեծ իշխանը, ինչպէս և վէպի մէջ ճախարար-ամիրաները չեն համարձակւում տեղի ապաստանի տալ Ասորեստանի թագաւորի փախստական որդիներին, իսկ թագաւորը տալիս է: Ափսոս որ վէպի մէջ չէ վիշաւ Կապուտկողի թագաւորի անունը, որ տեսնելիք թէ մնացած կը լինէր արդեօք մեծ իշխան Սկալորդու անունը, որին է տալիս խորհնացին Սենեքերիմի որդիներին ընդունելը: Սկալորդի անունն իսկ մի վիպական կոչում չէ, որ առնւած է ալապիսի վէպերից: — Խորհնացու պատմութեան մէջ Սկալորդին թագաւոր չէ անուանւում, բայց ճա հայրն է Պարուրի, որ առաջին պսակաւոր թագաւորն է Հալկաղանց թագաւորների մէջ, որով և վէպի մէջ եղած թագաւոր կոչումը շատ չէ հեռանում պատմութեան մէջ վիշատակւած հալոց թագաւորութեան ժամանակից: Միայն մի տարբեր կէտ կա՝ պատմութեան և վէպի մէջ, այն է, որ վէպի մէջ Կապուտկողի թագաւոր է վիշում, իսկ պատմութեան մէջ մեր առաջին մեծ իշխանները և թագաւորներն Արարատում էին նստում, թէպէտ և նրանց ենթարկւում էր և Հայաստանի հարաւային մասը: Կապուտկող կամ Կապուտոդն կամ Ընձաքիարս լեռներն ընկնում են Վանա լճի հարաւային կողմը, լճի մէջ խորը մտնող հրաշքանի վերայ: Ժ. և ԺԱ. դարերում Կապուտկողին մօտիկ, դէպի արեւելք՝ Ռշտունեաց Ոստանում և Աղթամարում նստում էին Աթրոնեաց կամ Վասպուրականի թագաւորները, որոնց ձեռքին էին ալը կողմերը: Վարելի է կարծել, որ վէպի և պատմութեան այս աշխարհադրական տարբերութիւնն ևս ժամանակի ընթացքում կրած փոփոխութիւն է, որով ժողովուրդը թագաւոր

որին նստեցնում է աղետեղ, որ իրան առելի մօտ է և ուր առելի մօտիկ ժամանակներում նստել են հալ թաղաւորներ:

Կապուտկողի թաղաւորը Սանասարին և Արամելիքին տալիս է քառասուն տուն ռամիկ ժողովուրդ, որոնց բնակեցնում են իրանց նոր շինած բերդում, որ թաղաւորն իբրեւ կալւած նրանց էր բաշխել. բերդի անունը դնում են Սանսուն, Սասուն, որ Սիմ լեռան հարաւային կողմում է ¹⁾։ Երկու եղբայրներն իրանց իշխանութիւնը հետզհետէ ընդարձակում են Սասունից դուրս դէպի հիւսիս. «Աւսարի բոլոր ու չուր Ծծմակաւքիթ՝ Մշու վերևով պատան քաշած եղած են չուրի Սեղանսրու գօտինը վի ձապաղջրու դուրան ու զրդ բիթուն լէ գաւթեց (Արամելիք)... որ մ' լէ զարկեց գնաց չուրի Մըսըր, ու Մըսըր լէ գաւթեց» — Աւսարը մինեռն Սիմ լեռն է. սորա հիւսիսային ճիւղերից մէկն է Ծծմակաւքիթ սարը, որ Մշու արևելեան կողմում է, մօտ երեք ժամ հեռու Մշուց ²⁾ և որի վերայ Գաւթիթը գութանին լծելով քաշեց մինչև Մառնիկ գիւղը, որ Մշու հարաւային արևելեան կողմում է, Սիմ լեռից հիւսիս: ձապաղջուրը ընկնում է Արածանու աջ ափին՝ Բալուից արևելք, Բինդեօլ լեռների հարաւային-արևմտեան կողմը: Սեղան-սարի գօտին, վէպի Նկարադրութեան համաձայն, պիտի ընկնի ձապաղջրի մէջ, ս. Կարապետի վանքից արևմուտք և պէտք է Բինգիօլից դէպի հարաւային-արևմուտք ձգող ճիւղերից մէկը լինի: Իսկ Մըսըրը կամ Մսուրը, Մսրալ քաղաքը, որ վէպի մէջ շատ է լիչւում և որ կաղմում է Սասունին թշնամի մի տէրութիւն, սխալ իմացութեան տուելիք կարող է տալ իւր համանունութեամբ Նդիպտոսի Մսրը կոչման հետ: Մինչև անգամ պ. Ս. Մանդինեանը իւր դասադրքի մէջ (Ազգ. Գիւցաղն. Աշխարհ) Մսրը դարձրել է Մուսուլ (Մոսուլ), որ հին Նինուէի տեղերումն է, Տիգրիս գետի վերայ: Բայց Մուսուլը, որ Հալաստանից դուրս է, չի կարող Մսրալ քաղաքը լինել. հէնց վէպի Նկարադրութեան ընթացքից

1) Պ. Գարազաշեանն իւր՝ Խորենացու խիտ քննադատութեան մէջ ամեն իւրաքանչիւր ապացուցանել թէ Խորենացին իւր պատմութիւնը (հին մասը) մեծ մասամբ իրանից է յերկրում, իբրեւ փաստ բերում է և այն, որ իբրեւ թէ Խորենացին Սանասարին Սիմ լեռան կողմում է բնակեցնել տալիս, միայն Սիմ և Սանասար անունների նմանութիւնից հանելով. Խորենացին Վճայ նմա (Սկայորդւոյ) բնակեցուցանել զՍանասար, Սիմ և Սանասար անունաց ձայնի նմանութեան 'այսելով (?), Սիմ լեռան, այսինքն Աղձնեաց կողմը... Խորենացին Սիմն անուն ի Սանասարայ կը լուի հանելը (Գար. քնն. պատմութիւն Հայոց): Թէ Խորենացին այս պատմութիւնն իրանից չէ հնարել և ունեցել է աղբիւր, եթէ ոչ զրաւոր, գէթ ժողովրդական, բուռնուր, դրան վկայ է մինչև այժմ կենդանի մնացած վէպը, որով Սանասարը Սիմ լեռան հարաւային կողմը, Սասունում է բնակում: Սիմ և Սանասար անունների մէջ, ինչպէս պ. Գարազաշեանը նմանութիւն չէ գտնում, Խորենացին ևս չէր դանիւլ բույց կա՞յ նմանութիւն Սանաս-ար և Սանաս-ունը (Սասուն) անունների մէջ:

2) Տեղադրութիւնք ի Փ. և ի Մ. Հայո՛ Հ. Սարգսեանի. եր. 227:

երևում է, որ Մըսըրը պիտի ընկնի Տօրոսեան լեռների հիւսիսային կողմը՝ ձապաղջրից արևմուտք, որովհետև վէպը որոշում է Աբամելլիքի իշխանութեան հիւսիսային սահմանները արևելքից արևմուտք, որ են՝ Ծծմակալքիթ, Մշու հիւսիսային կողմի պատ քաշած լեռներ, Սեղան-սարի դօտի, ձապաղջուր և վերջապէս՝ ամենից արևմուտք՝ Մըսը, կամ Մարալ քաղաք, որպիսի կոչմամբ միշտ վիշուում է մեր վարիանտում։ Փաւտոս Բիւղանդի մէջ կա մի այսպիսի կտոր. «Էջ (հայր Մարգարեան) լաին գետոյն հոսանացն Եփրատու, հովիտսն թանձրախուռն անտառին, ի գետախառնուհսն երկուց (հիւսիսային և արևելեան Եփրատ) ... որ ի տեղուոջն ի հնոցն իմն չինած քաղաք՝ զոր չինեալ Սանատրուկ արքայի, որում անում տեղուոջն Մ ծ ու ր ք կոչի» (Բիւղ. չորր. դպ. ժդ. գլ.)։ Այժմ ևս նոյն տեղում Արածանու աջ ափում, հիւսիսային Եփրատի խառնուրդին մօտիկ, ընկնում են Մնծուր լեռները։ Փ. Բիւղանդի վիշած սոյն Մծուր գաւառը, իւր քաղաքով, պիտի լինի և Մըսըրը կամ Մարալ քաղաքը (Մծրալ քաղաք). թիւրքական արտասանութեան ազդեցութեան տակ ճ. տառը հեշտութեամբ փոխւում է շ.-ի կամ -ի. մանաւանդ թէ լաւ ասած, քրդերի մէջ բնակող հայերը ճ' ունին, ալ միշտ չ կամ - փոխանակ ճ.-ի ¹⁾։

Սանասարի և Աբամելլիքի կալածանքների իբրև պարզև ստանալը թագաւորից և ալ կալածանքների ընդարձակումը վիշատակւում է արդէս և ժողովրդական վէպի մէջ, պատմական լիշատակութիւնից ալն տարբերութեամբ միայն, որ պատմութեան մէջ Աղձնիքում և զէպի արևելք է վիշուում, իսկ վէպի մէջ Տուրուբրանում և զէպի հիւսիս։ Այս տարբերութիւնը լառաջացած պիտի լինի նորանից, որ միջին դարերում Սասունցիք չարաբերութիւն ունէին աւելի հիւսիսային կողմերի տիրապետների հետ, և, է. դարից սկսած, մինչև անգամ Սասունն արդէն միացած էր համարւում Տարօնի հետ ²⁾ և գտնւում էր Մամիկոնեանց ձեռքին մինչև ԺԲ. դարը, երբ որ Աղձնեաց բոլշխութիւնն ալ ևս չը կար, իսկ Արծրունիք Վասպուրականում էին։ Կարելի է ասել և ալն, որ հ. Սրուանձտեանի վարիանտի պատմողը, Մշու կողմերից լինելով, վիշատակւում է Մշու մօտիկ աշխարհագրական անուններ. եթէ մեր Մոկացու պատմածի մէջ ևս Աբամելլիքի և Սանասարի պատմութիւնը լինէր, թերևս ալնոնղ զէպի հարաւ և արևելք, ալսինքն զէպի Մոկաց կողմերը ընդարձակելը պատմէր, որ աւելի հին ժամանակին կը վերաբերէր և պատմութեան վիշատակութեան համեմատ կը լինէր։

Աստուածաշնչի մէջ Մարասարն և Աղրամելէքն ասալ իրանց հօրն

¹⁾ Այժմ ևս Արածանում, աջ ափում Հիւս. Եփրատի խառնարանից քիչ արևելք, կայ Մեղրէ յայտնի աւանը։

²⁾ Յովհան Մամիկոնեան, Վեհեստ. եր. 13. և Մատ. Ուուհայեցի Մս. Բ. հատ. ձգ.։

սպանում են և չեղան փախչում Հայաստան. իսկ վէպի մէջ հօրը սպանողը միայն Սանասարն է, որին «իւր պապու (հօր) կռքեր չըն թողի որ ըզի (Սասուն) սըթրէր ու ելաւ խըստ էրեց ուր պապուն ու մամուն ու գնաց Բաղդադ»։ Այնտեղ Սանասարն իւր հօրը, երբ որ սա երկրպագութիւն էր տալիս իւր մեծ կռքին, սպանում է. «ու հեղմ' լէ լերոր կճաւ պապ, սըղէն... կուրզ մի իշաւ ու զպապ խալիֆէն եօթն գաղ գետին վար իջուց»։ Սանասարն իւր հօրն սպանելուց չեղան Բաղդադում նստում է իւր հօր աթոռը, իսկ Աբամելիքը մնում է Սասունում։ Ժամանակի աչս տարբերութիւնը, ինչպէս և Սանասարի կրկին Բաղդադ վերադառնալը, հարկաւ, կարող էին հաղարաւոր տարիների ընթացքում, բերնէ բերան աւանդելով, չեղաշրջուիլ։

Թէ ինչու Սենեքերիսի որդիքը Հայաստան և ոչ ուրիշ երկիր են փախել, պատմութեան մէջ չէ վշաւած, թերեւս նորա համար, որ Հայաստանն ապաւինելու համար աւելի ապահով տեղ է եղել իբրեւ Ասորեստանցոց հետ պատերազմող և նրանց չը հպատակող երկիր։ Վէպի մէջ կա և մի ուրիշ հանգամանք, որ հալոյստպան եղբայրներին Հայաստանում է ապաւինել տալիս. այդ աչն է, որ Բաղդադու խալիֆայի կինը հալ է եղել, ուստի և Աբամելիքն ու Սանասարը աւելի Հայաստանում իրանց մայրական ազգականներին մօտ կարող էին լուսալ ապաստան գտնել, քան ուրիշ երկիրներում, որոնք բոլորը Բաղդադու խալիֆաների մեռելներից էին փախչում, ուր մնաց կենդանիներից։ Թէպէտեւ վէպի մէջ Հայաստանի ամիրաներն ևս վախենում են և Կապուտկողի թագաւորն ընդունում է նրանց, չ'իմանալով թէ նրանք Բաղդադու խալիֆայի որդիներն են, բայց այդ վէպի աղաւաղումն է միայն, որովհետեւ վէպի ետեի մասից երևում է, որ երկու եղբայրները թագաւորի ազգականն են. «Մենք քո աւլատն ենք»—ասում են նրանք Կապուտկողի թագաւորին։ Բացի այդ կալ մի անձնաւորութիւն, որ Աբամելիքի և Սանասարի քեռին է. քեռի Թորոսը, որ թագաւորին մօտիկ մարդ է զուրս գալիս, նորա հետ գնում է Սասուն, Աբամելիքի մահից չեղան նա է կառավարում Սասունը, Աբամելիքի երեխաները նորանն են և նա է հոգ տանում նրանց մասին։ Դատաստանը նրանց քեռի Թորոսին է հասցնում քան թէ Մսրամելիքին, որ նրանց խորթ եղբայրն էր ¹⁾։ մի խօսքով նա ներկայանում է իբրեւ Աբամելիքի տան խնամակալը և թագաւորին մօտիկ ազատ, ազնւական մարդ, իշխան, որով և երկու եղբայրների մայրը, որ Թորոսի քույրը պիտի լինէր, թագաւորին մօտիկ ազնւական ցեղից է եղել, նորա համար և երկու եղբայրները հալոց թագաւորի մօտ են ապաստան գտել։

Եթէ վէպի բոլոր փոփոխութիւնները զուրս ձգենք, կը ստանանք

¹⁾ Հ. Արուստանի վարկանսում թէպէտեւ Մսրամելքը Աբամելիքի որդին է, բայց դարձեալ զուրս էլ գալիս իբրեւ օտար, թշնամի անձ։

հետեւեալ բովանդակութիւնը, որ նուցանում է Աղձնեաց բղէլիսները և Արծրունեաց ծագման մասին եղած պատմական ցուցումների հետ.

«Ասորեստանի Սենեքերիմ թագաւորն (Նինուէ, Բաղդադու խալիֆայ) արշաւանքներ է անում դէպի Հալաստան: Մի արշաւանքի ժամանակ հալոց թագաւորի ազգականներից, կամ ազատ տնից գերի տարած մի աղջկայ հետ ամուսնանում է. նորանից ունենում է երկու որդի՝ Սանասար և Աբամելիք: Սրանք իրանց հօրը կռատան մէջ, երբոր նա երկրպագութիւն էր տալիս իւր մեծ կռքին, սպանում են և փախչելով Հալաստան, ապաստանում են հալոց թագաւորի մօտ, որ իւր աղջկանը տալիս է Աբամելիքին և կալած ու ժողովուրդ բաշխելով, իրանց քեռի Թորոսի հետ նրանց բնակեցնում է Սիմ լեռան հարաւային կողմերում, ուր հիմք են դնում Սասունին: Աբամելիքի և Սանասարի սերունդներն աչնտեղ աճելով, տիրում են Սիմ լեռան շրջակայքին և կազմում են հալոց հզօր նախարարութիւններից մէկը, որ՝ ինչպէս մեր շատ նախարարութիւնները՝ ծագամաք օտար է»:

(Ար շարունակւի)